

սարկուսագնեւորուն: Վարժարանը ունի հանդերձատուն, խոհանոց և լուսացարան. վերի յարկը կը գտնուի տեսչարանը, աշակերտաց ննջարանները եւ մէկ երկու ուսուցչաց սենեակները, կրկին գրադարանները եւայլն: Ճեմարան ըստւած շէնքը արտաքինապէս ունի գեղեցիկ ճարտարապետութիւն մը, ընդարձակ սրահը սերտարանի վերածուած է, չորս սենեակներէն երեքը՝ դասարանի, իսկ մէկը՝ բնագիտական գործիքներու պահարանի: Ծէնքը դուրսէն 21 մէթր թւերով եւ 240 քառակուսի մէթր տարածութեամբ կանոնաւոր քառակուսի մ'է, վայելուչ ճակատ մը ունի: Ներքինը խաչաձև է, կեդրոնը զմբէթայարկ է, վայելուչ եւ բարձր, որուն գագաթը գոնէ 15 մէթր բարձր ըլլալու է յատակէն վեր: Պատերուն ներսերը դարաններ գործուած են, 8 հատ մեծ հիւսիսէ հարաւ թւերուն մէջ. եւ 4 փոքր միայն միւս թւերուն վրայ: Բոլոր դարանները լեցուած են հնագիտական, պատմական, ազգաբանական եւայլն եւայլն եւ ուրիշ հետաքրքրելի անուշանքներով, որոնք տպագային պիտի կրնան կազմել Ս. Յակոբեանց վանքին թանգարանին կորիզը: Ճեմարանի շինուածքին ներքնայարկը երբեմն ծառայած է քաղաքացի մանչերու իբր վարժարան Մեսրոպեան անուամբ, երբեմն ալ, իբր գծագրութեան դասարան:

Ժառ. Վարժարանը կը պահէ առ առաւելն 30 աշակերտներով երեք դասարան՝ որ կ'ստանան կրօնական ուսումն, գիտութիւն, կը սորվին կարեւոր լեզուները, եւ որոշ ծրագրով մը կը պատրաստուին Ընծայարան մտնել: Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի երկու դասարանները կը կոչուին Մեղիոնեան Դատարան, Ազգ. բարերար Մելքոնեան բարեպաշտ հարապատներուն՝ յանուն Ժառ. Վարժարանի վեհանձնորէն յատկացուցած նպաստին պատճառաւ: Ընծայարանի դասարանները կը հետեին յատկապէս պատրաստուած ծրագրի մը, ստանալով կրօնական բարձր ուսում, եւ շարունակելով ուսումը այն կարեւոր լեզուներու զոր կ'ուսանէին Ժառ. Վարժարանին մէջ: Ընծայարանի ընթացքը բոլորելէ յետոյ ընծայացուք կը կոչուին կուսակրօն եկեղեցականութեան եւ ի ծառայութիւն Ս. Աթոռոյ: Ընծայարանը ունէր նաեւ դասարան մը ութը սարկուսագնեւորով՝ որ կը կոչուէին Կիւրպիկեան ասուեր, որոնք անցեալ տարի իրենց չըջանը աւարտեցին եւ կոչուեցան կուսակրօն եկեղեցականութեան. այս